Քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման, հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնման, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացման, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ նաև նրա ֆիզիկական և հոգեկան բնականոն զարգացման ապահովման, նրա դաստիարակման և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանության, հասարակության անվտանգության ապահովման, կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քրեական արդարադատության իրականացման աջակցության նպատակով՝ Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվում են ստորև նշված գործառույթները.

1. Պատիժների կատարում՝

1.1. տուգանք,

1.2. հանրային աշխատանք,

1.3. որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում,

1.4. օտարերկրյա քաղաքացուն Հայաստանի Հանրապետության տարածքից վտարում,

1.5. ազատության սահմանափակում,

1.6. իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառման ապահովում:

2. Վերահսկողություն՝

2. 1. պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով անձանց նկատմամբ,

2.2. պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ,

2.3. հղի կանանց և մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգված անձանց նկատմամբ,

2.4. հիվանդության հետևանքով պատժից ազատված կամ պատժից հետաձգված անձանց նկատմամբ,

2.5. արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատված անձանց նկատմամբ:

3.Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացում ստորև նշված ոլորտներում՝

3.1. Կրթական,

3.2. մասնագիտական որակավորման,

3.3. իրավական,

3.4. հոգեբանական,

3.5. սոցիալական,

3.6. մշակութային,

3.7. կրոնական,

3.8. մարզական:

4. Խափանման միջոցների կատարման ապահովում՝

4.1. տնային կալանք,

4.2. վարչական հսկողություն:

5. Անվտանգության միջոցների կատարման ապահովում՝

5.1. որոշակի վայրեր այցելելու արգելքի կիրառման ապահովում,

5.2. հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը կատարելու ապահովում:

6. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցների կազմում և դատարանում ներկայացում:

7. Պրոբացիայի շահառուին և տուժողին հաշտեցում.